

ՀԱՅ ԴՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՊՈԴՈՋԵՆՈՒՄ

Վ. Ռ. ԴՐՈՒՄՅԱՆ

Դժվար է ասել, թե առաջին անգամ հայերը երբ են հայտնվել Պոդոլյան լերկրում, Հավաստի աղբյուրների վկայությամբ՝ XI դ. վերջերին հայերը բազմաճյուղաբարձրացան Կիևում, որտեղից նրանք հեռացել են Ուկրաինայի արևմտյան կողմերը՝ մինչև Պոդոլյե, Չնայած ժամանակին գոյություն է ունեցել Պոդոլյան վոյեվոդություն և ապա Պոդոլյեի նահանգ, բայց Պոդոլյան երկրամասն ավելի հայտնի է ոչ իբրև վարչական, այլ աշխարհագրական հասկացություն, որի սահմանները ձգվում են այժմյան Լվովի մարզից մինչև Օդեսայի մարզի հյուսիսը՝ րնդդրկելով Աջափնյա Ուկրաինայի մի ղզալի հատվածը՝ Խմելնիցկու, Տերնոպոլի և Վիննիցայի մարզերը:

Հայկական հնադույն բնակավայրերը Պոդոլյեում երկու գյուղեր էին Դնեստրի վտակ Սմոտրիչի ափերին, հետո գաղութներ առաջացան Պոդոլյեի շուրջ երկու տասնյակ քաղաքներում՝ Կամենեց-Պոդոլսկում, Յազլուվցում, Ջոլտիեվում, Բարում, Ստոլբենիցայում, Բուչաչում, Ժվանցում, Բերեժանիում, Մոգիլյով-Պոդոլսկում, Բալտայում և այլուր: Բարգավաճում էին Պոդոլյան հագաղութները, հիմնվում էին վանքեր ու եկեղեցիներ, դպրոցներ, արհեստավորական կազմակերպություններ: Մի շարք քաղաքներում հայերը իրավունք են ստանում ունենալու իրենց սեփական դատարանը, որտեղ ղեկավարվում էին Հայոց դատաստանագրքով, իսկ Պոդոլյան Կամենիցում դեռևս 1350 թ. հայերն ունեին մինչև անգամ մահապատիժ կայացնելու իրավունք, քաղաքի լեհական և ուկրաինական մագիստրատների կողքին էր նաև հայկականը՝ հատուկ զինանշանով:

Հայ գաղթականությունը պահում և սերնդից-սերունդ փոխանցում էր ազգային հիշատակները՝ մասունքներ, գարգեր ու ժանյակներ, և ամենից ավելի՝ ձեռագիր գրքեր: Գրչագրերը վիթխարի նշանակություն են ունեցել ազգապահպանման գործում: Նույնիսկ այն ժամանակ, երբ մոռացվել է լեզուն, չի մոռացվել գիրը, և Պոդոլյեի հայերը շարունակել են գրել հայերեն տառերով, բայց օտար լեզուներով՝ ղփաղերեն, լեհերեն, լատիներեն:

Պոդոլյե հասցված կամ այնտեղ ստեղծված հայերեն ձեռագրերի մի մասը բնական արհավիրքների և պատերազմների հետևանքով, դժբախտաբար, ոչնչացել կամ անհետ կորել է: 1602 թ. Կամենիցում տեղի ունեցած հրդեհի ժամանակ, երբ հայ ժամանակագրի խոսքերով ամբողջ քաղաքի հետ մեկտեղ՝ «եկեղեցիք մեր Հայոց վեր ևս այրեցան, նոյնպես և զանկալատներն ու զանկաները հալեցան ի մէջ զանկալատանին»¹, այրվել են նաև հայկական շատ հուշարձաններ, այդ թվում, հավանաբար, նաև գրչագրեր: Մինաս Բժշկյանը 1820 թ. Կամենիցում եղած ժամանակ տեղեկանում է, որ այնտեղի հայոց

¹ Մ. Բժշկյան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 159:

դատարանում եղել են «500 ամաց գրեանք», բայց որոնք, ըստ նրա, «Թուրի ըէ ի հրդեհի անդ այրեցան և անհետ եղին... որովհետև բոլոր քաղաքն ի մոխիր լուծաւ»։ Այդ հրդեհից 70 տարի անց՝ 1672 թ. քաղաքը պաշարվում է թուրքերի կողմից։ Թնդանոթաձգության ժամանակ, ի թիվս այլ շինությունների, փլատակների են վերածվում նաև հայկական ս. Ստեփաննոս և ս. Աստվածածին եկեղեցիները², իսկ դրանից 59 տարի առաջ՝ 1613 թ., թաթարները հրկիզել էին ս. Խաչ եկեղեցին³։ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին վառվել էր պատահական հրդեհի ժամանակ։ Ձեռագրերը պահվում էին նաև եկեղեցիներում և, բնականաբար, ոչնչանում նրանց հետ միասին։ Պոդոլյան երկրի նվաճումը և թուրքական 27-ամյա տիրապետությունը (մինչև 1699 թ.) մեծ հարված էր Պոդոլյեի հայությունը. նրանց մի մասը ստիպված եղավ հեռանալ երկրից՝ իր հետ տանելով նաև գրչագիր մատյանները։ Այս դեպքում ևս անխուսափելի էին կորուստները։

Վրաստանի գիտությունների ակադեմիայի Կ. Կեկելիձեի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում պահվող № 287 հայերեն ձեռագրում կան ուշագրավ տեղեկություններ Պոդոլյան երկրում մնացած ձեռագրերի վերաբերյալ։ Դա մի ցուցակ է այն գրքերի, որոնք հավաքել է Մինաս Բժշկյանը Լեհաստանի, Բուկովինայի և Ռուսաստանի քաղաքները շրջագայելիս։ Հավաքված ձեռագրերի խորագրերի կողքին Բժշկյանը գրել է նաև հայտնաբերման հանգամանքի մասին։ Օրինակ՝ «Գիրք կացորդաց բազմախաղ. բոլորգիր հին, որ է իբր բանաստեղծական գովեստ», այնուհետև փակագծերի մեջ կարդում ենք Բժշկյանի ծանոթությունը՝ (գտնալ ի փլատակս Զուանչայի), «Պատարագամատոյց պակաս» (հաննալ ի փլատակաց Զուանչայի), «Սաղմոս մագաղաթ, բոլորգիր հին» (գտնալ ի մէջ աւերակաց սուրբ Ստեփաննոս մատրան Կամենցոյ), «Մաշտոց բոլորգիր հին» (հաննալ ի փլատակաց Զուանչայի)⁴։

Մեզ են հասել Պոդոլյեում ընդօրինակված հարյուրից ավելի հայատառ մատյաններ, որոնք պահվում են Երևանում, Վիեննայում, Վենետիկում, Լենինգրադում, Նոր Զուլալում, Կիևում, Լոնդոնում, Լիովում, Անթիլիասում, Գեոլալում, Փարիզում և Երուսաղեմում։ Այդ ձեռագրերը ներկայացնում են Պոդոլյեի՝ Կամենեց-Պոդոլսկի, Յազլովեց, Մոգիլյով-Պոդոլսկի, մասամբ նաև Ժվանեց ու Ռաշկով գաղութները։

Պոդոլյեում գրված մի շարք ձեռագրերի հայտնաբերման և հրապարակման գործում զգալի աշխատանք է կատարել Ղևոնդ Ալիշանը։ Նրա «Կամենիցս ժողովածուն, որի մեջ զետեղված են Պոդոլյեում գրված մի շարք աշխատություններ ու հիշատակարաններ, այս առումով մեծ արժեք է ներկայացնում։

Պոդոլյեի հայ գրչության ամենակարևոր կենտրոնը Կամենիցն էր՝ Սմոտրիչի քարքարոտ ափերին կառուցված ամրոց-քաղաքը, որն ավելի քան 500

² Նույն տեղում։

³ Е. Сецинский, Исторические сведения о приходах, церквях Подольской епархии, I, Каменецкий уезд (Труды Подольского епархиального историко-статистического комитета, вып. VII, Каменец-Подольск, 1895, էջ 82)։

⁴ Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 72։

⁵ № 287 ձեռագրի վրա մեր ուշադրությունը հրավիրել է 2002 Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարանի) գիտական աշխատակից Ս. Լավաֆարյանը և մեր տրամադրության տակ դրել նրա պատճենը, որի համար հայտնում ենք նրան մեր շնորհակալությունը։

տարի բնակեցված է եղել նաև հայերով՝ Սադոկ Բարոնչի տվյալներով՝ 1566 թ. այդ յուզարում հայերն ունեին 900 տուն⁶, մոտ 1.200 ընտանիք⁷:

Բնակչության թվով Կամենիցը ժամանակին գերազանցում էր Լվովի հայ գաղութին: Քաղաքում կային հայկական տասը եկեղեցիներ, եպիսկոպոսանոց, կուսանոց, դպրոց, հիվանդանոց, շարժական երգեհոն և երգեցիկ խումբ⁸: Այնքան մեծ է եղել Կամենիցի նշանակությունը լեհահայոց հոգևոր կյանքում, որ ժամանակին այն անվանել են «Լեհական էջմիածին»⁹:

Համեմատաբար բիշ Լեն Յազլովեցից, Ժվանեցից և Ռաշկովից մեզ հասած ձեռագրերը՝ Մոդիլով-Պոդոլսկից պահպանվել են ավելի նոր ժամանակների շուրջ 30 մատյաններ:

Պոդոլյան գրչությաններից մեզ հասած ձեռագրերը հնաբանությունն են բնութագրում լայն տարածված կազմելու այդ վայրերում գործած հայ հեղինակների ու գրիչների, ինչպես նաև ընթերցողների հետաքրքրությունների մասին: Կամենիցում, Յազլովեցում և այլուր շուրջ հիսուն հայ գրիչներ ընդօրինակել են պատմություններ, տաղեր ու տարեգրություններ, կանոնգրքեր, դատաստանագրքեր, բառարաններ, ավետարաններ, հայսմավուրքներ ու մաշտոցներ, սաղմոսարաններ, աղոթագրքեր և ճաշոցներ: Ահա երախտավոր այդ գրիչներից մի քանիսի անունները՝ Մինաս, Աղսենտ, Հոլուպո, Ներսես սարկավազ, Վարդերես Լեհացի, Հակոբ դպիր, Աստվածատուր դպիր, Ահակ սարկավազ, Հոհան դպիր, Գրիգոր, Խաչո, Մերիկ դպիր, Ներսես դպրապետ, Նիկոլ դպիր և այլն: Պահպանվել են երկու ձեռագրեր, որոնց արտագրողը Կամենեց-Պոդոլսկից Իսահակ անունով մի հայ երեխա է: Այդ ձեռագրերից մեկի (1640 թ. ընդօրինակված ժողովածու) հիշատակարանում պատանի Իսահակը գրել է. «Արդ, գրեցաւ ձեռսմբ անվարժ Իսահակ պատանեակի որդի Գրիգորին: Արդ, երես անկեալ աղաչմ զձեզ, հայրք և տեառք իմ, հանդիպողք այսմ մատենիս, անմեղադիր լերուք յաղագս սխալութեան և անզարդութեան գրոյս: Բայց չէ զարմանք, քանդի մանուկ տիօք գրեցի, այսինքն ԺԱ (11) ամաց էի, Դ (4) ամիս պակաս. եւ մանաւանդ թէր չէի հրմուտ գրչութեան արուեստի, բայց հրամանն և երկիւղ և սաստ վարժապետի իմոյ ստիպեաց զիս, զի այսպիսի աստուածային գանձն կարող զօրութեամբն աստուծոյ անկ եալեալ կատարեցի»¹⁰: Տասնմեկամյա այդ գրչի ուսուցիչը Թորոս եպիսկոպոսն էր, որին հիշում է Իսահակը նույն հիշատակարանում:

Այնքան նշանավոր էին Կամենիցի հայ գրիչները, որ այլ քաղաքներում ապրող հայերը երբեմն ձեռագրերի կրկնօրինակման պատվերներ էին ուղարկում Կամենից: Օրինակ, 1579 թ. «Հայսմավուրքը» կամենացի տեղի Օգսենտի որդի Խաչերեսը արտագրել է Յաշի բնակչուհի տիկին Կյուլիստանի պատվերով: Վերջինս այդ ձեռագիրը նվիրել է Բոտոշան քաղաքի հայկական ս. Աստվածածին եկեղեցուն¹¹:

⁶ Sadok Barącz, Ryz dziejow ormlanskich, Ternopol, 1865, էջ 94.

⁷ F. Makler, Rapport sur une Mission scientifique en Galicie et en Bukovine (Juillet-août 1925), «Revue des études arméniennes», t. VII, Paris, 1927, էջ 46.

⁸ Ռոնի միութին հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոովմայ (Ժամանակակից յիշատակարանք), ս. Պետերբուրգ, 1884, էջ 83.

⁹ Е. Сецинский, նշվ. աշխ., էջ 75.

¹⁰ Կ. Յուզրաշան, Լենինգրադի հայերեն ձեռագրերի ցուցակ (անտիպ):

¹¹ Ձեռագիրը ժամանակին պահվել է Ստանիսլավ քաղաքի հայկական եկեղեցում: Հիշա-

Պողոսյան գրչօջախներում կրթված և գրչության արվեստի մեջ հմտացած հայ դպիրները, հեռանալով այլ վայրեր, շարունակում էին իրենց շնորհակալ աշխատանքը։ Մեզ հայտնի են, օրինակ, Առքստագես և Մուրադ սարկավագ գրիչների անունները, որոնք Յաղուվեցից տեղափոխվել և աշխատել են առաջինը Սիլիստրայում (Բուլղարիա)¹², երկրորդը՝ Սերաթում (Ռումինիա)¹³։ Գրիչները հեռանալիս երբեմն տանում էին անավարտ ընդօրինակությունները և ավարտի հասցնում նոր վայրում (1655 թ. ճաշոցի ընդօրինակումը սկսվել է Յաղուվեցում և ավարտվել Սեչովում)¹⁴։

Պողոսյան հայաշատ կենտրոններում գրված ձեռագրերը շատ դժվար է տարբերել այլ վայրերում օրինակվածներից։ Գրիչները շատ ավանգապահ էին և չէին հեռանում ընդունված ձևերից։ Տառաձևերը, նախշերը, նկարները ոճական տարբերություններ չունեին ինչպես այլ գաղթօջախներում, այնպես էլ Մայր հայրենիքում ստեղծված ձեռագրերի տառերից ու մանրանկարներից։ Որպես կանոն հիշատակարաններում նշվում էր գրչության տեղը, ժամանակը, գրչի, ծաղկողի, պատվիրատուի, ստացողի անունները։ Գրիչները հիշատակում էին նաև հայոց կաթողիկոսի և լեհ թագավորի անունները։ «Գրեցաւ սա,— կարդում ենք, օրինակ, 1636 թ. Կամենիցում գրված «Կանոնգրքի» հիշատակարանում,— ի յաշխարհս լէհաց ի քաղաքն Կամէնից. ընդ հովանեաւ սբ. Աստուածածնին և սբ. Նիկողայոս սբանչելագործին, ի հայրապետութեանն հայոց տեառն տէր Փիլիպպոսի. Եւ ի թագաւորութեանն իւլիսաց Վլատիսլավին»¹⁵։

Երբեմն նշվում էր նաև քաղաքի հայ դատավորի անունը՝ «և դատաւորութեան հայոց դատաստանին Գրիգարշային»¹⁶։

Պողոսյան հայության մեջ մեծ թիվ էին կազմում զփշաղախոս հայերը։ Հայ հեղինակները չէին կարող անտեսել իրենց օտարախոս հղբայրներին, ուստի և ձեռնամուխ են լինում խիստ անհրաժեշտ մի շարք գրքերի զփշաղեղեն թարգմանությունը։ Ինչպես հայտնի է, զփշաղները չունեին իրենց դիրն ու գրակսնությունը և նրանց շրջապատում ապրած ու նրանց լեզուն յուրացրած հայերը գրում էին հայատառ զփշաղերեն։ Մեզ է հասել 1575 թ. Կամենեց-Պողոսկում գրված մի ձեռագիր, որի մեջ գրիչը՝ խաչերեսը, գետեղել է նաև Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» առաջաքանի, տասը գլուխների, «Լեհահայոց դատաստանագրքի» հայատառ զփշաղերեն թարգմանությունները¹⁷։ Ուշագրավ այդ ձեռագրում տեղ է գտել նաև «Պատմութիւն և խրատք խիկարայ» մեծար-

տակարաններից մեկը հրապարակել է Գր. Յուսյուշյանը Կ. Պոլսի «Բյուզանդիստան» (1912, № 4825), հետո այն նկարագրել է Ն. Ակինյանը (տե՛ս նրա «Յուզակ հայերէն ձեռագրաց ի կով և ի ստանիսլավ», Վիեննա, 1961, էջ 55)։ Ձեռագիրն այժմ պահվում է Լվովի պատմության թանգարանում։

12 Կ. Ա ի շ ա ն, Կամենից, էջ 197։

13 Բ ա ր գ է ն աթոռակից կաթողիկոս, Յուզակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1961, էջ 802։

14 Ղ. Ա ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 191—192։

15 Ձեռ. № 3706, էջ 228ր։

16 Կ. Յ ու Վ ք ա շ յ ա ն, նշվ. աշխ.։

17 Այս ձեռագիրը հայտնաբերել է Բարթոլոմեոս վարդապետը Լվովում 1879 թ., այն այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում 468 համարի տակ (տե՛ս Ն. Տ ա շ յ ա ն, Յուզակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 943—945)։

մեր դործի ղփչաղերեն թարգմանութիւնը, Հարկ է նշել, որ հայատառ ղփչաղերեն նյութերը ղփչաղների (պոլովցիների) մեռած լեզվի կարեւորագույն հուշարձաններից են, ուստի և գտնվում են մասնագետների ուշադրութեան կենտրոնում: Վերջերս լույս են ընծայվել «Լեհահայոց դատաստանագրքի»¹⁸ և Խիկարի պատմութեան ու խրատների հայատառ ղփչաղերեն տեքստերը՝ համապատասխան ուսումնասիրութեամբ¹⁹:

Պոդոլյան հայ գրչության ներքին արտադրվել և շրջանառութեան մեջ են եղել 'Իրոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան», Դավիթ Անհաղթի «Սամանք իմաստասիրութեան», Պորփյուրի «Ներածութիւն ստորոգութեանց Արիստոտելի», Արիստոտելի «Պերի Արմենիաս», Դավիթ Հարթացու «Նկատումն Արիստոտելի», «Էականց դիրք», Սյունեցու «Մեկնութիւնք սահմանաց», Մովսէս Խորենացու, Հովհաննէս Երզնկացու, Գրիգոր Տաթևացու, Սամուել Անեցու, Ներսէս Շնորհալու, Գրիգոր Պահլավունու, Կոստանտին Բարձրիբերդցու, Վանական վարդապետի և այլոց գործերը²⁰:

Կամենիցում ստեղծված պատմագիտական աշխատութիւնները կարևոր սկզբնաղբյուր են ոչ միայն լեհահայոց, այլև Ուկրաինայի, Լեհաստանի, Մոլդովիայի ու Ռումինիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմութեան համար: Հատկապես մեծ արժեք ունեն «Կամենիցյան տարեգրութիւնները», որոնք 1430—1652 թթ. ընդգրկող մի քանի ժամանակագրութիւններ են: Հեղինակներն են Կամենիցի ավագերեց տեր Հովհաննէսը (մահացած 1610 թ.), նրա որդին՝ տեր Գրիգորը և թոռները՝ Օքսենտ և Հակոբ քահանաները: 1624 թ. սկսած՝ մոտավորապես երեք տասնամյակ, ժամանակագրութիւնը կազմել են անհայտ հեղինակներ՝ հայատառ ղփչաղերեն և ապա միայն հայերեն²¹: «Կամենիցյան տարեգրութիւնը» նաև արժեքավոր հուշարձան է հայատառ ղփչաղերենի համար: Ֆրանսիացի նշանավոր ղփչաղագետ պրոֆ. Ժ. Դընիի և լեհ ղփչաղագետ, դոկտ. էդ. Տրիյարսկու աշխատակցութեամբ արդեն լույս է ընծայված կամենիցյան հեղինակների այդ աշխատութեան հայատառ ղփչաղերեն բնագիրը՝ ֆրանսերեն թարգմանութեամբ: «Տարեգրութեան» հայերեն բաժինների ֆրանսերեն թարգմանութիւնը կատարել է ֆրանսիացի անվանի հայագետ, պրոֆ. Ֆ. Ֆելդին²²:

¹⁸ Słowo Marjan Lewicki, Rehnata Kohnowa, La version turque-kiptchak du Code de lois des Arméniens polonais d'après le ms. № 1916 de la Bibliothèque Ossolineum, Polska Akademia nauk, Komitet orientalistyczny, „Rocznik orientalistyczny“, t. XXI, Warszawa, 1957.

¹⁹ Jean Dénay et Edward Tryjarski, „Histoire du sage Hikar“ dans la version arméno-kiptchak, „Rocznik orientalistyczny“, 1964, t. XXVII, zeszyt 2, 1964, Ա. Ա. Մարտիրոսյան, Պատմութիւն եւ խրատը Խիկարայ իմաստնոյ, (հայկական խմբագրութիւն), դիրք Ա, Երևան, 1969, էջ 331—335, դիրք Բ, Երևան, 1972, էջ 189—195.

²⁰ Գև. Մ. 1689, 1718, 3965, 7050 և այլն:

²¹ «Կամենիցյան տարեգրութիւնների» ձեռագրերը պահվում են Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում և Փարիզի Ազգային գրադարանում: Ղ. Ալիշանը հրատարակել է դրանց մի մասը (տե՛ս «Տարեգրք հայոց իշխաց և օլախաց երկրի», «Բազմավէպ», 1895, էջ 524—534), 1896 թ. Ալիշանը վերահրատարակում է «Տարեգրութիւններն» իր «Կամենից» ժողովածուի մեջ՝ հայատառ-ղփչաղերեն նյութերով հանդերձ: «Տարեգրութիւնների» Ռումինիային վերաբերող մասերը Գրիգոր Բըլբըլյանի (1906 թ.) և Հ. Սիրունու (1936 թ.) թարգմանութեամբ լույս են ընծայվել Բուխարեստում:

²² Jean Dénay, L'Arméno-comen et les „Ephémérides“ de Kamleniec (1604—1613),

«Կամենիցյան տարեգրություն» մեջ առանձնապես հետաքրքրական է տեր Օբսենտի կազմած ժամանակագրությունը, որից շատ տեղեկություններ կարելի է քաղել լեհ-թուրքական պատերազմների, մասնավորապես Ցեցորայի (1620) և Խոտինի (1621) ճակատամարտերի մասին: Այդ ամենը շարադրված է ոչ միայն ժամանակակցի, այլև ականատեսի գրչով:

Նշանավոր այդ ճակատամարտի ավելի մանրամասն նկարագրությունը տվել է կամենիցահայ մեկ այլ պատմիչ՝ Հովհաննեսը «Պատմություն պատերազմին Խոթինու» արժեքավոր երկում: Բնագիրը (Կ. Ցուլբաշյանի ռուսերեն թարգմանության հետ) հրատարակել է նրա հայտնարերողը՝ աղբյուրագետ-բանասեր Հակոբ Անասյանը²³: Իր աշխատության 18 գլուխներում Հովհաննես Կամենացին հանգամանորեն տալիս է ճակատամարտի պատմությունը՝ սկզբից մինչև թուրքական ուժերի պարտությունը: Այդ «Պատմությունը» արժեքավոր աղբյուր է կարևոր այդ իրադարձության ճշմարտացի պատկերը վեր հանելու գործում:

Կամենիցահայ ամենանշանավոր հեղինակներից է բառարանագիր, փիլիսոփա և ժամանակագիր Ստեփանոս Ռոշբան, որի թողած գրական հարուստ ժառանգությունը վաղուց գրավել է ուսումնասիրողների ուշադրությունը: Ս. Ռոշբան ծնվել է Կամենիցում 1670 թ., ուսանել Հոռոմում, որտեղ նա 1700 թ. հանդիպել է հայ ազատագրական պայքարի մեծ գործիչ Խսրայել Օրուն և նրա զինակից Մինաս վարդապետին: Օրուն խնդրանքով նա հայերենից լատիներեն է թարգմանել հայ մեկիքների նամակը՝ հասցեագրված Հոռոմի պապին²⁴: Փիլիսոփայության ու աստվածաբանության դոկտոր Ռոշբան վերադառնալով Հոռոմից, լեհաստանում ստանձնում է հոգևոր բարձր պաշտոններ՝ եղել է Պոդոլյի և Պոկուտյի եկեղեցիների դեկան, նույն թեմերի առաջնորդը և այլն²⁵: Միաժամանակ նա զբաղվել է գրական արդյունավետ աշխատանքով: 33 տարի շարունակ տքնել է իր ամենաարժեքավոր գործի՝ հայ-լատիներեն և լատինահայերեն բառարանի վրա, օգտագործել է բազմաթիվ սկզբնաղբյուրներ. «Իր մոտ կհանդիպինք բառերու,— գրում է Ս. Ճանաշյանը,— որոնք նույնիսկ կպակսին ն(որ) Հ(այկազեան) Բ(առարանին) մեջ»²⁶: Ս. Ռոշբայի գրչին են պատկանում նաև «Ներածություն ի բովանդակ փիլիսոփայութեան Արիստոտելի», «Աստուածաբանութիւն դպրոցական» (2 հատոր), «Կենսագրութիւն հայոց եպիսկոպոսաց ի Լեհս», «Մաշտոց հայոց» և «Թերականութիւն հայոց լեզվին» աշխատությունները: Հատկապես արժեքավոր է նրա «Ժամանակագրութիւնը»,

Ural-Altäische Bibliothek fortsetzung der „Ungarischen bibliothek“, Wiesbaden, 1957, Գրոթ. Ժ. Դընին իր այս թարգմանությունը կատարել է Փարիզում պահվող ձեռագրից, որը Ալիշանի օգտագործած վենետիկյան ձեռագրի համեմատ բավական թերի է:

²³ А. С. Анасян, История хотинской войны Иоаннеса Каменецкого («Պատմաբանասիրական հանգես», 1958, № 2, էջ 258—260), Ցովհաննէս Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու, աշխատասիրությունը Յ. Ս. Անասյանի, Երևան, 1964:

²⁴ Ստեփանոս Ռոշբայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցական-հրատարակեց Հ. Համազասպ Ոսկեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1964, էջ 190:

²⁵ Słownik Sadok Barącz, Zywoty sławnich ormian w Polsce, Lwów, 1855, էջ 281—282:

²⁶ Մեսրոպ Ճանաշան, Ստեփանոս Ռոշբանի բառարանը, («Բաղմավէպ», 1955, էջ 255):

որտեղ ուշագրավ շատ տեղեկութիւններ կան լեհահայոց պատմութեան վերաբերյալ:

Գրչութեան հարուստ ավանդութիւններ ունեցող Պոդոլցեի հայ գաղթօջախներում պատշաճ ուշադրութիւն է ընծայվել նաև համայնքների կանոնադրութիւնների և վերադաս իշխանութիւններից ստացված արտոնագրերի պահպանման, անհրաժեշտութեան դեպքում հայերեն թարգմանութեան գործին: Մեզ են հասել այդպիսի մի շարք արժեքավոր վավերագրեր: Այսպես, օրինակ, լեհ իշխան Յուդեֆ Լյուբոմիրսկու 1751 թ. Ռաշկովի հայերին տված արտոնագրի նույն ժամանակ կատարված թարգմանութիւնը²⁷, Յաղովցեի հայերի 1646 թ. կաղմած «Կտրիճվորաց եղբայրութեան» 31 հոգվածներից բաղկացած կանոնադրութիւնը, որը ձեռագիր վիճակում պահվում է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում²⁸, Որպես կանոն, այդ գաղութներում պահվում էին ծննդոց և մեռելոց մատյաններ, ինչպես նաև հարսանեկան պայմանագրերը գրանցելու և վավերացնելու հատուկ գրքեր: Դժբախտաբար, դրանց մասին պատկերացում կարող ենք ստանալ մի շարք հեղինակների կատարած քաղվածքներով միայն, որովհետև այդ մատյանները կորել են:

Մեծ խնամքով են կազմվել նաև դատական արձանագրութիւնները: Դատարանների դրիշթբալտուդարները մանրամասն արձանագրել են դատական գործի էությունը, դատարանի որոշումը, հայցվորների և պատասխանողների, ինչպես նաև վկաների ցուցմունքները, դատարանի վճիռը: Նրանք մշտապես նշել են ամսաթիվը, շաբաթվա օրը, ներկա եղած դատավորների անունները և այլն: Կամենիցի հայոց դատարանի 1572—1664 թթ. գրված արձանագրութիւնների շուրջ 15.000 էջ (27 հատորներ) կազմող գրքերը թանկագին աղբյուր են Կամենից քաղաքի իրավական և սոցիալ-տնտեսական կյանքը, հայուկրահնական և հայ-լեհական հարաբերութիւնները լուսաբանելու համար: Առաջմ հրապարակված են այդ արձանագրութիւնների հայերեն և հայատառ ղփչաղերեն հնագույն մասերը²⁹, Պոդոլցեում ստեղծված հայատառ-ղփչաղերեն նյութերի մեծ ամենից հարուստը հենց խնդրո առարկա դատական արձանագրութիւններն են, որոնք շատ նորութիւններ կարող են տալ լեզվաբաններին: Արձանագրութիւնների մի մասն էլ կազմված է հայատառ լեհերեն:

Լեհահայ գաղութներում գրքի պահանջն, ի վերջո, ստիպում է մտածել բազմացման ամենակատարյալ միջոցի՝ տպարանի մասին: 1616 թ. Լվով քաղաքում Հովհաննես Քարմատանենցի հիմնադրած հայկական տպարանը Սովետական Միութեան տարածքում առաջինն էր: Այն կոչված էր բավարարելու ոչ միայն Գալիցիայի, այլև հարևան շրջանների ու առաջին հերթին Պոդոլցեի հայութեան մտավոր պահանջմունքները: Մեզ հայտնի են այդտեղ հրատարակված երեք գրքեր: Հետագայում ևս անհրաժեշտութիւն է առաջացել տպարան հիմնել, անգամ ցանկութիւն է եղել Ոսկան Երևանցու տպարանը փոխադրել Լվով, իսկ Յան Սոբեսկի թագավորը, երբ ծրագրեր էր մշակում լեհաստանի թշնամու՝ Թուրքիայի թիկունքում հայկական պետականութեան վերականգն-

27 Տե՛ս Մ. Բ ժ շ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 165—168:

28 Տե՛ս Հ. Տ ա շ յ ա ն, Ցուցակ, էջ 680—681:

29 Տե՛ս Վ. Ռ. Գ ր ի գ ո Ր յ ա ն, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրութիւնները (XVI դ.), Երևան, 1963, Դ. Ի. Г р у н н ы н, Документы на полесском языке, XVI в. (Судебные акты Каменец-Подольской армянской общины), Москва, 1967.

ման մասին, նախատեսում էր հիմնել նաև հայկական տպարան: Նույնպիսի առաջարկ էր տանում իր հետ 1696 թ. Լեհաստանից էջմիածին ուղևորված նրա ներկայացուցիչը՝ թագավորական քարտուղար Սիմեոն Պետրոսովիչը: Ցան Սոբեսկին հայտնում էր կաթողիկոսին, որ ինքը պատրաստ է իր միջոցներով հայկական տպարան հիմնադրել և լեհահայերի մեջ անվճար տարածել հայերեն հոգևոր գրքեր: Տպարանը նախատեսվում էր հիմնադրել Արևմտյան Ուկրաինայի Մարիամպոլ բաղաքում: Բայց այդ ծրագրերն անկատար մնացին թագավորի անակնկալ մահվան պատճառով, որը տեղի ունեցավ Պետրոսովիչի մեկնելուց մի քանի շաբաթ անց³⁰:

Պոդոլյեի հայ դպրոցների մասին մեր ունեցած նյութերը, ցավոք, այնքան էլ հարուստ չեն: Ամենավաղ տեղեկությունները վերաբերում են 1593 թ., երբ Կամենիցում գործում էր հայկական դպրոց: Այդ դպրոցի շենքը (հայկական հիվանդանոցի մոտ) վառվել է 1602 թ. հրդեհի ժամանակ, բայց երկու տարի անց՝ տեղի հայերը դպրոցի համար կառուցում են փայտե երկու նոր շենք, ժամանակակցի վկայությամբ՝ «մեծամեծ վայելուչ և գեղեցիկ շինուածով... զպատուհաններն ազնիւ ապիկի, որ կոչի վէնէտիկի, նկարած ծածկոյթներով... ատակս աղիւսով շարեց և գեղեցիկ դուռներ շինել ետ»³¹:

Յաղլովցիի դպրոցի մասին հայտնի է, որ այն XVII դ. 60-ական թվականներին հիմնել է Լվովի պապական դպրոցի շրջանավարտ Աստվածատուր Ներսեսովիչը և որ այնտեղ սովորել են 60-փոց ավելի հայ աշակերտներ³²: Գրիչներն ուսում էին ստանում այդ դպրոցներում, իսկ ավելի վաղ ժամանակներում՝ եկեղեցիներում, գրչության արվեստի մեջ հմուտ վարպետների ղեկավարությամբ:

1664 թ., երբ Լվովում բացվում է պապական դպրոցը, ուր, ի դեպ, պատշաճ բարձրության վրա էր գտնվում հայոց լեզվի ու քերականության ուսուցումը, Պոդոլյեից շատ հայեր իրենց զավակներին ուղարկում են այնտեղ սովորելու: Ֆրանսիացի քարոզիչ Պիդուեն նկատում է, որ դա դժգոհության առիթ է տվի Լվովի հայերին. «Հայքն իրվովայ տրտնջել ուրեմն կալան.— գրում է նա,— թէ ահա դպրանոցն ողջոյն լի է աշակերտօք Կամենեցէ և յԾաղլովցեցէ, իսկ զպատանիս յիրվովայ իբր թէ ոչ ընդունիցիմք»³³: Հայտնի է, որ այդ դպրոցի բարձր դասարանի աշակերտները 1668 թ. հիմնադրեցին դպրոցական թատրոն, որտեղ բեմադրում էին հայերեն չափածո պիեսներ, այդ թվում՝ «Մարտիրոսութիւն սրբոյն Հռիփսիմեայ», «Մահ Կեսարայ», «Առեղծուածք Սողոմոնի», «Մահ Հերովդեայ» ողբերգությունները³⁴: Այդ ներկայացումներով է սկսվում նոր ժամանակների հայ թատրոնի պատմությունը:

³⁰ Я. Р. Дашкенич, Армянское книгопечатание на Украине в XVII веке («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 123):

³¹ Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 156:

³² «Բոսնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռովայ», ս. Պետերբուրգ, 1884, էջ 125:

³³ Նույն տեղում, էջ 131:

³⁴ Նույն տեղում, էջ 133: Վենետիկի քաղաքային գրադարանում պահպանվել են «Մարտիրոսութիւն սրբոյն Հռիփսիմեայ» ողբերգության տեքստը և դերակատարների ցուցակը, որոնք լույս են տեսել «Բազմավէպում» (տե՛ս «Բազմավէպ», 1884, էջ 329—336, 1885, էջ 33—38, 118—123, 211—217, 1886, էջ 35—43): 'Էրակատարների ցանկից (էջ 329) երեւում է, որ նրանց կեսից ավելին Պոդոլյեից ղնացած հայ պատանիներ էին:

Պոդլիսկի հայ գրչության օջախների ձևավորման ու զարգացման գործում, անտարակույս, մեծ դեր են խաղացել այլ վարքերից բերված հայկական ձեռագրերը: Ահա դրանցից մեկը՝ 1349 թ. Ղրիմի Սուլթանթ Քաղաքում ընդօրինակված «Ճաշոցը», որը 1398 թ. օգոստոսի 15-ին կամենցի խոյիստի որդի Սինանը դնել և նվիրել է իր հիմնադրած Կամենցիցի ս. Նիկողայոս եկեղեցուն: Սինանը 1391 թ., այսինքն շուրջ 500 տարի, այդ սքանչելի ձեռագիրը գտնվել է Կամենցիցում: Հարյուրամյակները չեն խամրել «Ճաշոցի» գրերն ու նախշերը, և հնամենի այդ մատյանը դարեր շարունակ գրչագրական մշակույթի նստապառ մի աղբյուր էր այդ արվեստով հրապուրված տեղի երիտասարդ հայ վարպետների համար:

Ինչպես գրչության այլ կենտրոններում, այնպես էլ Կամենցիցում և մյուս վայրերում աշխատել են վարպետ կազմարարներ, որոնք ոչ միայն զբաղվել են նորաստեղծ գրչագրերի կազմման գործով, այլև վերականգնել են զառաժյալ ձեռագրերը, ինչպես, օրինակ, Վիեննայում պահվող XIII դ. «Ավետարանը»³⁵, Վիննաիկում պահվող XIV—XV դդ. «Սաղմոսարանը»³⁶, Վերականգնման կամ կազմման տեխնիկան ճիշտ այնպիսին էր, ինչպես գրչության այլ կենտրոններում: Օղտագործում էին հատուկ մշակված կաշիներ, տախտակներ: Որպես պահպանակներ՝ երբեմն օգտագործում էին հնացած մագաղաթն ձեռագրերից թափված թերթեր:

Պոդլիսկի հայ գրչության օջախներում բարձր է եղել նաև գրքերի ձևավորման արվեստը: Պահպանված ձեռագրերի մեջ կան շքեղ նկարազարդված մի քանի օրինակներ, որոնք վկայում են մանրանկարիչների նուրբ ճաշակն ու վարպետությունը: Դատելով Տաշյանի ցուցակից, Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանում պահվող «Ավետարանը» (գրված ու ծաղկված Կամենցիցում, 1606 թ.) օժտված է բացառիկ նուրբ զարդանկարներով ու նախշերով: Աչքի են զարնում բազմագույն, հաճախ ոսկով կատարված զարդագրերը և գեղեցիկ խորանները³⁷: Սքանչելի մանրանկարներ ունի Յաղլովցցում ստեղծված և այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 1618 թ. մագաղաթն «Ավետարանը», որի գրիչը և ծաղկողը Հովհաննես Եվդոկացին է: «Ավետարանի» մարգարտաշար գրերը, չկրկնվող զարդանկարները, նրանց գույների մաքրությունն ու ներդաշնակությունը և, վերջապես, դրվագված արծաթե նուրբ և դեղեցիկ կազմը վկայում են յազլովցցյան հայ գրիչների մեծ վարպետության մասին: Հիշատակարանում Հովհաննես գրիչը խնդրում է հիշել նաև իր քույր Մարիամին, «որ աշխատեցաւ ի վերայ սորա», ինչպես նաև իր ուսուցիչ Թոխաթեցի Պալին՝ իր մորեղբորը, «զի բազում քանիւ և աշխատութեամբ կրթեր զիս յարեստ գրչութեան»³⁸:

Լեհ հայտնի արվեստագետ Թադեուշ Մանկովսկին, որը երկար տարիներ զբաղվել է լեհահայոց արվեստի ուսումնասիրությամբ, գրում է, որ «ի սկզբն քան ոչ մի տարբերություն ոճական տեսակետի Լեմբերգի, ինչպես նաև Լեհաստանի հարավ-արևելյան մյուս քաղաքներումն, զոր օրինակ Կամենց-Պո-

35 Ն. Տ ա շ յ ա ն, Թուցակ, էջ 701:

36 Թ ա ռ ս ե Ղ Ս ա ռ գ ս ե ա ն, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 225:

37 Տ ն ՝ ս Ն. Տ ա շ յ ա ն, Թուցակ, էջ 366—367:

38 Զեռ. № 9655, էջ 150ա:

դոլսկին և ետքեն Զամոսցայի մեջ նկարագարոված ձեռագիրներուն և միաժամանակ հայտնի վաճառքներուն մեջ հորինվածներուն միջև»։ Սակայն նա գտնում է, որ «իրաց այս վիճակը ժէ դարուն սկիզբը կը փոխվի, երբ լեհաբնակ հայեր կաթողիկե եկեղեցվո հետ կը միանան։ Այսու արեւմտյան արվեստին ազդեցութիւնը հետզհետե կը զօրանա և նշմարել կդառնա նույնիսկ մանրանկարչական ճյուղին մեջ»³⁹։

Կամենիցի հայ գրիչների մեջ եղել են նաև բանաստեղծական շնորհքով օժտված անհատներ, որոնք թողել են չափածո հիշատակարաններ։ Դրանք, սովորաբար, ընթերցողներին ուղղված ոտանավորներ են՝ գրիչներին ու նրանց մերձավորագույն ազգականներին շմոռանալու, գրչագրերը խնամքով պահելու խնդրանքով⁴⁰։

Կա մի հիշատակարան, որի հեղինակը (1617 թ. Կամենիցում օրինակված «Հարանց վարքի» գրիչ Թորոս Կրոնավորը) այդ կարգի տվյալներից բացի, թողել է նաև «Հարանց վարքի» երկարաշունչ և ոգեշնչված գովերգություն։ Բերենք քաղվածքներ այդ հիշատակարանից.

«...Յագգանագեանս մեծ տօմարի, Հայոց թվին հազար ամին,
վաթսուն ու վեց այլ անվին, քսան և հինգ յունիս ամսոյն
Աւարտ եղև այսմ տառի, այս հոգևոր բուրաստանի
Ի յաստուածապան քաղաքի, որ Կամենից անուն կոչի:
Հարանց վարք սա անուանեալ, զի զվարս սուրբ հարցն սլատմաբանեալ:
Գործով գանունն յինքեան բերեալ, քերթողաբար ստուգաբանեալ:
Սա ցանկալի դրախտ յօրինեալ, ի սուրբ հոգոյն արմատացեալ,
Շնորհօք նորին առօրգացեալ, անմահական պաղով լցեալ:
...Յոյժ քաղցրագոյն են բանք սուրին, քան գիտելիսն մեղսին,
Որք զնաչակ սուրին առին, յար ընթերցմամբ[ը] ոչ յագեցին»⁴¹։

Հայ թարգմանական գրականութիւնը հարստացնելու ուղղութիւնով ավելի նոր ժամանակներում՝ XIX դ. կեսերին լուրջ աշխատանքներ են կատարվել Պոդոլյեի հայկական մեկ այլ խոշոր գաղթօջախում՝ Մոգիլյով-Պոդոլսկում⁴²։ Դա Պոդոլյեի հայկական ամենավերջին կենտրոնն էր, որը ծաղկում ապրեց այն ժամանակ, երբ մյուս գաղութները վաղուց արդեն հոգեվարքի մեջ էին։ Առաջին հայկական եկեղեցին այդ քաղաքում կառուցվեց 1743 թ., երկրորդը («Անարատ հղության ս. Աստվածածին») կառուցվեց 1772—1791 թթ.։ XVIII դ. 70-ական թվականներին հայերը կազմում էին այդ քաղաքի բնակչության մոտավորապես կեսը՝ շուրջ 6000 մարդ⁴³, նրանք ևս ունեին իրենց դատարանը և

³⁹ Քաղեռւշ Մանկուկի. Արուեստը հայ գաղութներու մէջ («Հանգէս ամսօրհայ», 1963, էջ 128—129)։

⁴⁰ Տե՛ս ձեռ. № 8158, էջ 333ա։

⁴¹ Ձեռ. № 9436, էջ 576ա—576բ։

⁴² Մոգիլյովում եղած հայերեն ձեռագրերի մասին մեղ ջատ րան հայտնի չէ. ժամանակին «Անարատ հղության» եկեղեցում պահվելիս է եղել 1781 թ. օրինակված մի «Պատարագամատուց»։ Այնտեղ են եղել նաև գաղութի «Մենդոց», «Մեռելոց» և «Պսակի» մատյանները, որոնք 63 տարի շարունակ (1743—1826 թթ.)՝ կազմվել են հայերեն։ Տե՛ս Մ. Շո վ ր յ ա ն, Հայության բեկորները Ռուսիայի հարավ-արևմտյան նահանգներում («Արձագանք», Քիֆիս, 1895, № 151)։

⁴³ Władysław Pobóg Córsky, Powiat Mohilewski w gubernii Podolskiej, Kraków, 1902, էջ 209.

վույթը, 1806 թ. ռուսական կառավարության որոշմամբ Մոգիլյովի հայ քահանաներից մեկը՝ Զուդեֆ Քոխչտոֆովիչը եպիսկոպոս է նշանակվում և նրան էին ենթարկվում Ռուսաստանում եղած բոլոր հայ-կաթոլիկ եկեղեցիները՝ Կամենիցից մինչև Աստրախան ու Թիֆլիս:

Վիեննայի Մխիթարյանները այնտեղ էին ուղարկում իրենց հոգևորականներին: Դրանցից էր նաև Ռափայել Ուղունյանը (Երկանյանը), որը Մոգիլյով է ժամանել անցյալ դարի 20-ական թվականների սկզբին և մնացել շուրջ քառորդ դար: Նա քահանայագործում էր «Աստվածածին» եկեղեցում և միաժամանակ արդյունավետ կերպով զբաղվում գրական աշխատանքով:

Ուղունյանը, կարելի է ասել, միջնադարյան առումով դասական գրիչ էր, թարգմանիչ-գիտնական: Տիրապետելով լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և լեհերեն լեզուներին, նա հայերենի է թարգմանել այդ լեզուներով դրված մեծ մասամբ դասական գրողների բազմաթիվ ստեղծագործություններ: 1848 թ. Մոգիլյովում նա սկսում և հաջողությամբ ավարտում է Հոմերոսի «Իլիականի» թարգմանությունը: Դա, ինչպես նաև Ուղունյանի մյուս բոլոր գործերը, բացառությամբ վաղ շրջանում հրատարակած մի գրքի, անտիպ են և պահվում են Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում⁴⁴, Ուղունյանը բնագրից թարգմանել է նաև Վիրգիլիոսի «Էնեականը», Եղովպոսի առակները, Վոլտերի «Հենրիականը», Լեսսինգի, Փիլատոսի ողբերգությունները և այլն: Նա քաղվածքներ է թարգմանել Մոլիերի դրամատիկական գործերից, ինչպես նաև Շիլլերի արձակից և լեհական գեղարվեստական գրականությունից: Այդ թարգմանությունները շատ բարձր է գնահատել Ներսես Աղինյանը և ցավով նշել, որ դրանք հրատարակված չեն⁴⁵:

Անխռնջ այս թարգմանիչը թողել է ընդհանուր հաշվով 25000 էջ կազմող 40 ձեռագրեր, որոնցից շուրջ երեք տասնյակը նա ստեղծել է Պոդոլյեում: Մոգիլյովից հետո նա անցել է Ռաշկով, իսկ այնտեղից՝ Կամենից, որտեղ և 1863 թ., 63 տարեկան հասակում կնքել իր մահկանացուն:

Ռափայել Ուղունյանը (լեհերը գրում էին՝ Ռաֆալ Լանգիեր) համարվում է Կամենեց-Պոդոլսկի վերջին հայազգի քահանան⁴⁶: Բայց նա Պոդոլյեում ստեղծագործած նաև վերջին հայ գրիչն էր: Նրա գործունեությունը եզրափակվում է Պոդոլյեի հայ գրչօջախների ավերի քան երեք հարյուր տարի ընդգրկող պատմությունը:

Պոդոլյեի հայկական կենտրոնները, այսպիսով, դարեր շարունակ հաղորդակից էին հայ մշակույթի զարգացմանը: Հավատարիմ հայրենի ավանդույթներին, այդ գործի առաջամարտիկներից էին գրի ու գրչության անձնավոր մշակները, որոնք ոչ միայն ձգտել են փրկել հայ գրքերը կորստից, այլև բազմացրել են դրանք, ստեղծել նորերը, նպաստել հայկական գրի տարածմանը և դրանց միջոցով՝ ազգապահպանման գործին:

⁴⁴ «Յուրակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիեննա», հ. Բ, կազմեց Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 796—830:

⁴⁵ «Անկարկ մը Վիեննական Մխիթարեան միաբանության գրական գործունեության վրա» (1811—1911), («Հուշարձան գրական ժողովածո առթիվ 100 ամյա հորիզինի հաստատման Մխիթարեան միաբանության ի Վիեննա (1811—1911)», Վիեննա, 1911, էջ 27—28:

⁴⁶ Słowa Michał Rolle, Życie ormian kamienieckich w XVII i XVIII wieku, Kraków, 1891, էջ 1:

АРМЯНСКОЕ РУКОПИСНОЕ ИСКУССТВО В ПОДОЛИИ

В. Р. ГРИГОРЯН

Резюме

В армянских поселениях Украины и Польши на протяжении столетий создавались многочисленные армянские рукописи, которые играли большую роль в культурной жизни местных армян. Искусство письма было наиболее развито в армянских центрах Галиции и Подолии.

Из армянских поселений, существовавших в Каменце-Подольском, Язловце, Могилеве-Подольском, Рашкове и в других городах Подолии, до нас дошло более ста армянских рукописей, хранящихся в библиотеках и музеях Еревана, Вены, Венеции, Ленинграда, Киева, Новой Джульфы (Иран), Иерусалима, Львова, Лондона, Парижа, Антипиаса (Ливан) и Герлы (Румыния). Эти рукописи созданы руками армянских писцов-переписчиков. Среди рукописных книг имеются истории и хроники, книги канонов и судебники, а также церковная литература. Некоторые из рукописей имеют интересные памятные записи. В Каменце-Подольском были переписаны, например, труды Дионисия Тракийского, Порфирия, Аристотеля, Мовсеса Хоренаци, Ованеса Ерзинкаци, Григора Татеваци, Самуэля Анеци, Нерсеса Шнорали, Григора Пахлавун и др. авторов.

Большую ценность для науки представляют «Каменецкие хроники», коллективный труд, авторы которого излагают историю города 1430—1652 гг. Другой армянский автор из Каменца — Иоаннес подробно изложил историю Хотинской войны 1621 г. Тридцать три года своей жизни посвятил работе над армяно-латинским и латино-армянским словарем известный армянский ученый, автор многих трудов по философии, грамматике и истории Степанос Рошка Каменецкий. Уникальны книги на армяно-половецком языке, созданные каменецкими армянами. Они играют большую роль в деле изучения мертвого языка половцев.

В армянских рукописных центрах Подолии было очень развито искусство художественного оформления книги. Среди уцелевших рукописей имеются великолепно иллюстрированные манускрипты, свидетельствующие об утонченном вкусе и блестящем мастерстве художников-миниатюристов.

Серьезные работы по обогащению армянской переводной литературы осуществлены в середине прошлого века в Могилеве-Подольском. Рафаэл Узунян с подлинников перевел на армянский язык «Илиаду» Гомера, «Энеиду» Вергилия, «Басни» Эзопа, а также произведения Вольтера, Лессинга, Мольера, Шиллера и других.